ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ք. Երևան, Ս. Դավթի 87ա

«31» հուլիս 2024թ.

ՈՐՈՇՈՒՄ No. 660-Ա

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետ Արման Մնացականյանս, քննարկելով ֆիզիկական անձ Գևորգ Ռոմիկի Ավագյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

Համաձայն հարկային վարչարարության ընթացքում հարկային իրավախախտում հայտնաբերելուց անմիջապես հետո հարկային մարմնի պատասխանատու պաշտոնատար անձի կողմից կազմվող թիվ 5030/2023/Ե/Ա արձանագրության /կցվում է/ ֆիզիկական անձ Գևորգ Ռոմիկի Ավագյանի (Հասցե՝ Շիրակ, Գյումրի, Դեմիրճյան փող., տ. 10, ՀՎՀՀ՝ 85582216, ՀԾՀ՝ 1405920025) չկատարված հարկային պարտավորությունը 03.10.2023թ-ի դրությամբ կազմում է 116.820 դրամ, այդ թվում հարկ՝ 110.000 դրամ, տույժ 6.820 դրամ:

Վերոնշյալ պարտավորության մասով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությունում, համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի, չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ՝ վարչական ակտ ընդունելու նպատակով 08.07.2024թ թվականին հանրացված վարչական վարույթի մասին հարկ վճարողը պատշաճ կերպով ծանուցվել է փոստային կապի միջոցով, սակայն չի ներկայացել վարույթի նյութերին ծանոթանալու համար և որևէ բացատրություն չի տվել:

Համաձայն ՀՀ կադաստրի կոմիտեից ստացված տեղեկությունների՝ ֆիզիկական անձ Գևորգ Ռոմիկի Ավագյանի կողմից Շիրակ, ք.Գյումրի, Վ. Սարգսյան փող., շ. 4, 10 բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքը 01.02.2022թ-ից ամսական 100.000 ՀՀ դրամ պայմանագրային արժեքով տրամադրվել է վարձակալության :

Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի /այսուհետև՝ Օրենսգիրք/ 140-րդ հոդվածի՝ ֆիզիկական անձը հանդիսանում է եկամտային հարկ վճարող, Օրենսգրքի 141-րդ հոդվածի համաձայն՝ վերոնշյալ գործարքը համարվում է եկամտային հարկով հարկման օբյեկտ:

Համաձայն Օրենսգրքի 150-րդ հոդվածի 7-րդ կետի, վարձակալական վճարների մասով եկամտային հարկը հաշվարկվում է 10 տոկոս դրույքաչափով :

Օրենսգրքի 156-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն ֆիզիկական անձը պարտավոր է Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին ներկայացնել Օրենսգրքի 151-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված եկամուտների մասով 2022 թվականի եկամտային հարկի և սոցիալական վճարի տարեկան հաշվարկ

մինչև հաշվետու տարվան հաջորդող հարկային տարվա 2023 թվականի մայիսի 1-ը ներառյալ և վճարեր դրա արդյունքում առաջացող հարկային պարտավորությունների գումարը համաձայն Օրենսգրքի 158-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի :

Ֆիզիկական անձի կողմից իրականացված վերը նշված գործարքի մասով սահմանված ժամկետում հարկային մարմին չի ներկայացվել եկամտային հարկի և սոցիալական վճարի տարեկան հաշվարկը և չի կատարվել եկամտային հարկի վճարումը:

Արդյունքում սույն որոշմամբ գանձման ենթակա օրենքով սահմանված ժամկետում չկատարված պարտավորությունը 03.10.2023 թ-ի դրությամբ կազմում է 116.820 դրամ, այդ թվում հարկ՝ 110.000 դրամ, տույժ 6.820 դրամ, որն առաջացել է ֆիզիկական անձի կողմից գույքի վարձակալության գործարքի արդյունքում և ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի համաձայն հաշվարկված տույժերից:

Գանձման ենթակա չկատարված պարտավորության նկատմամբ օրենքով սահմանված կարգով և չափերով հաշվարկվում են տույժեր, որոնք ենթակա են կատարման մինչև սույն որոշման կատարման օրը՝ ՀՀ հարկային օրենսգրքով կամ օրենքով սահմանված կարգով հաշվարկված տույժերի հետ միասին:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55, 56, 58, 88 հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. ֆիզիկական անձ Գևորգ Ռոմիկի Ավագյանից 116.820 դրամ պարտավորության գումար, ինչպես նաև սույն որոշման կատարման օրվա դրությամբ ՀՀ հարկային օրենսգրքով կամ օրենքով սահմանված կարգով հաշվարկված տույժերը համաձայն ստորև ներկայացված աղյուսակի՝

03.10.2023 թ-ի դրությամբ չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ

Չափման միավորը՝ դրամ

Հ/Հ	Հարկի և այլ պարտադիր վճարի տեսակը	Հաշվարկված հարկ/վճար		Հաշվարկված տույժ	Հաշվարկված տուգանք	Ընդամենը	Վճարման ուղղությունը	Հաշվի համարը
		առաջացման ամսաթիվ	գումար					
1	2	3	4	5	6	7= 4+5+6	8	9
1	Եկամտային հարկ	01.05.2023	110.000	6.820	-	116.820	պետական բյուջե	900008000490

2. Սույն որոշումն օրենքով սահմանված ժամկետում անբողոքարկելի դառնալուց հետո ուղարկել կատարման ՀՀ ԱՆ ՀԿ ապահովող ծառայություն:
3. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել հարկ վճարողին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59 հոդվածով սահմանված կարգով՝ իրազեկելուն հաջորդող օրվանից:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական մարմին՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70, 71 հոդվածներով սահմանված կարգով, ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ ՀՀ վարչական դատարան:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ **ԱՐՄԱՆ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ**

Ստացա որոշման օրինակը _____ _____ _____

Ստորագրություն հարկ վճարողի /կամ ֆիզ. Անձի/ պաշտ անձի անուն ազգանուն ամսաթիվ

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝

Հարկ վճարողի չկատարված պարտավորությունների գանձման վերաբերյալ հարկային մարմնում առկա մեկից ավելի վարույթների շրջանակներում ընդունված և ուժի մեջ մտած որոշումներով գանձման ենթակա ընդհանուր պարտավորությունը 1.500.000 ՀՀ դրամ գումարը գերազանցելու դեպքում, որոշումներն ուժի մեջ մտնելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում հարկային պարտավորությունների վճարման անհնարինության վերաբերյալ բավարար ապացույցներ ներկայացվելու դեպքում, եթե դրանք ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կհամարվեն հիմնավոր, հարկային մարմինը ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված արգելադրման գործընթաց չի իրականացնի:

Կատարող՝ ՀՀ ՊԵԿ, իրավաբանական վարչություն
Զարուհի Ֆարմանյան, հեռ. 010-30-91-91 /91-27/: